

ԱՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆ:

Ա. Գ. Բ. Ե. Բ.

Մեր նոր ստացած գրքերուն մէջ աւմենէն աշըի զարողն է «Հայ Գրողները» զոր կազմած են Պ. Աղայիսն, Ա. Ահարոննեան, Յով. Թուամանեան, Վ. Փափականական, Ա. Փափականական, Այս չորսն ալ ծանօթ արդէն իրենց գրական գործունէութեամբ: Մեծահատոր գործս՝ Բազմավէսի դիրքով գունագեղ ճակատով 688 էջերէ կը բաղկանայ և ընդարձակ գործին Առաջին մասը կը կազմէ բովանդակելով իր մէջ միայն Ռուսահայ գրագէտներու — ինամով ընտրուած — ուտանաւոր և արձակ զրականութիւնը, ընդ ամէնը բասն և չորս յայտնի գրողներու գործերը և գէմքերը: Բաֆֆիէն՝ մինչև Աւորպէտ:

Հատորիս կազմողներուն նպատակն է ճաշակաւոր կտորներով լեցուած հատոր մը դնել բարձրագոյն աշակերտաց առջն՝ իրը ընթերցանութեան զիրք մը, և առ այդ՝ պէտք էին յիշեալ չորս զրագէտները իրենց ճաշակով ընտրէին զանոնք: «Այս ձեռնարկութեան նպատակը եղել է երկու ջոկ-ջոկ և ստուար հատորների մէջ հաւաքել ուուսահայ և թիւրքահայ գրողների ինքնուրոյն երկերից ամբողջական գրւածքներ և կտորներ: Այս տարի չկարողացանց միաժամանակ տպագրել երկուն էլ: այլ միայն այս հատորը, որ յատկացրած է ուուսահայ գրողների երկերին: Միաը թողեցինք եկող տարւան. այն տեղ կը ինեն մի ցանի ուուսահայ գրողներ ևս:

Այս հատորը բովանդակում է երկու տարւայ դասընթացք և պէտք է անցնեն մեր զարոցների չորրորդ և հինգերորդ դասարաններում:

Երբ Ռուսահայը՝ տաճկահայ զրագէտ մը պիտի ցննադատէ՝ և տաճկահայ զրագէտը՝ զուսահայը, յայտ է թէ ցննադատութեան մէջ հակառութիւններ անպատճառ պիտի նկատուէն: Այսկա նաշակի ինդիր է: Ռուսահայը կրնան մեզի համար ըսել թէ տաճկահայը զմեզ չեն հասկնար, և մենց փո-

խազարձաբար: Այսոր, — ձգենք զիները Բաֆֆին, Գամառ Գաթիպան — տաճկահայերս ամենէն աւելի Ահարոննեանը կը հասկնանք և կ'ախորդինք. և ուսւահայը երբէց չեն հասկնար և չեն ախորդիր ո'չ Սիստմերօն, ո'չ Վարուժանը, գոփսազարձաբար զանոնք միայն Ահարոննեանը կը հասկնայ:

Մտադիր ենք յառաջիկային մեր ընթերցողներուն ներկայացնել համարիս մէջ մտած՝ ապրող զրագէտները՝ համառօտ տեսութեամբ մը և դէմքերով:

*

ԶԱՒԱԽԵՑԻ Պատկերները 168 էջերով հատոր մը կազմած կը բովանդակէ տասն և մէկ վիպակներ՝ որոնց եօթը արդէն 1901էն սկսեալ հրատարակուած էին Մըշակի, Աղրիւրի, Մուրճի, Արշալոյսի մէջ. անտիպաներն են «Օծի ինէթածք», «Ծնկնաւորը», «Աթի ուրբաթ»ը: Զաւախեցիէն ունէինք «Զաւախի աղերը» զրգոյկը տպ. 1900ին ի թիֆլից:

Գրիս հեղինակը բատ բաւականի յաջող կը ցտնենք պատկերներ գծելու՝ առնուած ընտանեկուն և ընկերային կեանքէ՝ գունաւորուած նկարագրական վրձննով, հետաքրքրական նայուածքներով: լեզուն ու միտքը կը մօտենայ մերինին:

Զաւախեցիին պատկերներուն առաջին զրցոյն է հատորս, անշուշտ զիտաւորութիւն ունի յաջորդն ևս հրապարակ հանելու:

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ՝ նոր Խարայէլի Սաղմոնենք (տաճկական արասագներ). — Յովհ. Կոստանեանի գէմքը կը զնեմ, շատ անզամ դիմազիծն ալ ընթերցողին հետ կը բնայ խօսիլ...

Կոստանեանի Սաղմոները հաւաքածոյ մ'են տարը տարուան ցերթուածիկներու (26 թուով) և կը բովանդակուին 47 էջերու մէջ, յորոց տասը հատը արդէն կումայի և Արշալոյսի մէջ հրատարակուած էին: Կոստանեանը 1896ին արդէն հրատարակած էր Շիրայի իգեետաներից հատորիկը:

կան բանաստեղծներ՝ որոնց քերթուածւները ախորժով կարդալնէս վերջ դեռ շարունակութիւնը կը փնտենք, երբ կ'անպարազանանք թէ մեր մտցին մէջ կամ սրտին վրայ թախիծի, ուրախութեան ևն բիծ մը չմաց: Այսպիսիներէն ունի նաև կոստանեանը: Զայրոյթի զգացումով ու յաջող զրուածներէն է ան երր նոր իսրայելացին՝ կեցած Ատանայի նահատակներուն դիմակ՝ իր ձայնը երկինց կը հասցնէ, և ի վերջոյ կ'ըսէ.



Յովհ. Կոստամեամ

«Եւ թափէ՛ վերից, թափէ՛ կայծակներ, և հուքը-բորբոք Զարդիք թոյնը այրէ՛, հող դարձուր - Աստուած Սարաւօթ...»

Եւ արդէն այս յառաջարան - քերթուածով՝ բանաստեղծը իր «Սազմաներ»ը նուիրում է Ատանայի նահատակների յիշատակին:

Վրահնի (Ա. Քալանթար) Մանրանկարները ուրիշ բան չէ՝ բայց եթէ 1900-1903 Հոկտ. Մշակի մէջ հրատարակած յօդուածներուն ամրող զական հաւաքածոյթը՝ երկու 500ի ջեսն հատորներու մէջ ամ-

փոփած: Հատորները՝ մանրանկարներուց ցուցահանդէս մը կը բանան ընթերցողին դիմաց, ուր զետեղուած են ամէն տեսակներ: Կամ բազմատեսակ ծաղկանց պարտէզ մը՝ ուր բնական է վարդին և ունչանին հետ կան նաև տժոյն և անրոյր ծաղկիներ: Ընթերցող՝ վիպական պատկերներէ յանկարծ կը փոխադրուի քննական տեսութեան մը, ճանապարհորդագրութենէ՝ լուրի մը: Արդէն ինցն Քալանթար՝ «Բնչ են մանրանկարները» հարցումին կը պատասխանէ - կեանքի և նրա արտայայտութիւնների նկարազրութիւններ: Իսկանգ եմ առել այն գծերի և երևոյթների վրա, որոնց ունեցել են հասարակական նշանակութիւն: Նրանց մէջ պատկերացել է մեր հիմնարկութիւնների և գործողների ընթացիկ կեանքը այն բնորոշ երևոյթներով, որոնք կազմել են օրիայ չարիքը: Նիւթը տուել են ինձ սեփական տպաւորութիւնը, անմիշական զիտողամթիւնը, մարդկանց պատմածը, նամակների հաղորդածները, այն ամէնը, ինչ որ ցուլացնում է իր մէջ կեանքը և նրա արտայայտութիւնները »:

Բ. Թ Ե Ր Թ Ե Ր

Իրուսահայ պարբերական մամուլը ամւլութեան մէջ է: այսքան ատենէ ի վեր Մորժին պակասը չկրցան լիցնել. եղածներն ալ կամ միօրինակ ընթացը մ'ունին և կամ անկանոն կը հրատարակուին: Պատճառը, արդեօք դէպ ի Տաճկաստան երթեեկութիւնն է:

Հատոնց ի վեր Արարատը չէ հրատարակուած, այսպէս Յուզարարը որոյ գաղարումը պիտի զբանց: Իրը Օրաթերթ միայն կան ի թիֆլիս Մշակի ու Հորիզոնի, Մշակը իւր զին մի և նոյն ուղղութեամբ և խմբագիրներով կը շարունակուի. Ա. Քալանթարը (թիւ 181) մի բանի յօդուածներ կը նուիրէ «ճանապարհորդութիւն մեր երկրի մէջ (Փամբակ, Գեղարքունիք Արարան, Արագած, Արարանապոլ), Փափագելի էր որ ազգագրական և աշխարհագրական կէտեր ես անպակաս ըլլային: Ոմն Ուռւ-

բէն Դրամբեան «իմ վերջին խօսքը Յովկ։ Թումանեանի» խորազրով կը համարձակի ծանօթ և յայտնի է եղինակ կամ բանաստեղի Յովկ։ Թումանեանի գրական բանադրութիւնները երևան հանել, Թումանեանը իր պաշտոնները ունի՝ որոնց կրնան զինը պաշտպանել իրենց սովորական ըրած արհամարհական ոճով, բայց Դրամբեանը յամենայն դէպս եթէ չկարենայ ալ պատասխանել՝ միշտ պիտի ցուցնէ մեզ այն պարտէզը՝ ուսկից պառուներ առած է Թումանեան։ այդ պարտէզը Ա. Հայկունիի «ժողովրդական առակներ»ն են (Հմտ. Մշակ 187, 189 են ուր բառ առ բառ բանագործթիւնը դէմ առ դէմ կը դնէ քննադատը)։

Հարիզոնը՝ որ Գործի շարունակութիւնն է 2 Օգոստոսին սկսաւ հրատարակութիւնիրազիր – հրատարակիչ ունենալով Բ. Նորդալեանը, Ա. Գր. մի քիչ ուժով կը քննադատէ «Հացի Կտոր Զէյթունցուն» հաւացածոյն (թիւ 1, 3), ԱՌ. Սեանեան յօդուածներ կը նուրբէ «Պատմութիւնը մեր զպրոցներուն և պատմութեան զասագըրերը» նիւթին (թիւ 6–11)։

Թիֆիփէն գուրս կային հետեւեալ լրագրերը յԱղեցանարապոլ՝ «Ախուրեան», որ դադրած է իսկ յԱստրախան լրարեր, որ շարաթին անգամ մը լոյս կը տեսնէ որուն խմբազիր – հրատարակիչն է կարապետ Խաչատրեան։

*

Իրը մասնագիտական շարաթաթերթ՝ գովելի է Գիշատեաներ (Խմբազիր – հրատարակիչ՝ Ա. Ախանսեան)։ Այս շարաթաթերթը միակն է որ հայ ռամիկ ժողովրդին կը ծառայէ երկրագործական, անանաբուծական, պատիզպանական հետաքրքրական և օգտակար յօդուածներով։ Հարցեր և պատասխաններ բաժնին ներցե ժողովրդեան կողմանէ կը հարցուին՝ օգտակար խնդիրներ, որոնց կը պատասխանէ խմբագրութիւնը՝ զիւրին միջոցներ սովորեցնելով ժողովրդեան, զործադրելի այս կամ այն պարագային։

Փափագելի էր որ Դիւղատեաների ծրագրով Տաճկահայք ևս շարաթաթերթ մ'ուննային, որուն այնքան պէտք ունի տգէտ ժողովուրդը։

Հովիւը իրը կրօնական թերթ Եղնիկա. Բ. Եղնկեանցի խմբագրութեամբ, որ՝ բաւական առենէ ի վեր սկսած է իր առաջին էջին վրայ տաճկահայ կամ ոռուակայ զրագէտի մը դէմքը դնել, առանց ո՛ւ և ծանօթութեան։ Հովիւը իր դէպ ի Հորիզոնի կուսակցութիւնը ունեցած հակակութիւնը՝ ինչ պատճառաւ մինչև «Ազատամարտ»ին կը հասցնէ. ա'յլ է «Ազատամարտ»ը իրը կուսակցութեան մը թերթը նկատել, այլ է զայն իրը կատարեալ ծրագրով լրագիր մը նկատել։

Ջաւեշտաթերթերէն մնաց միայն Խարարալան, զոր չորս տարիէ վեր կը շարունակէ Աստ. Երիցեան. նուազ ճաշակով ծաղրանկարներուն հետ ունի և սրամիտ և ճաշակաւոր գծուածքներ. այդպէս են և յօդուածները¹։

*

Ակաւաթիւ են այսպէս և ամսաթերթերը, լաւ որ Տ. Նազարեանցը կայ, որոն խմբագրութեամբ կը հրատարակուին «Աղրիւր պատկերազարդ ամսաթերթ մանուկների և պատասխների համար» և «Տարազ գեղազիտական, զրական, հասարակական, քննադատական, բազարական, հանդէսը»։ Երկուքն ալ իրենց ծրագրին և նպատակին կ'ընթանան։

Կը շարունակին նաև հետեւեալ ամսագրերը. «Լումոյ, գրական, քաղաքական, պատմական և հանրային», Գիւտ ա. բ. Աղանեանցի խմբագրութեամբ։ Նոր Դպրոց «Կովկասի Հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միութեան» հրատարակութիւնը՝ որուն խմբազարկան մարմինը կը կազմեն Արեգեան Արտ. Ղազարեան

1. Խուսահայոց թերթերու խմբագրութեանց հետ ՔԾ. Խակոսոց՝ անոնց հասցն ուժենալու համար բայ է թերթին անոնց դրան. օրինակի համար — Rédition Nord-Droits, Tiflis — (Russie-Caucase).

Գ. Յարութիւնեան իս. Ռաշմանեան Տ.
և Տէր-Միրակեան Յ.»: — Հասկիր ման-
կական պատկերազարդ ամսագիրը որուն
խմբագիր-հրատարակիչն է Կատ. Լիսի-
ցեան:

Տակաւին այս չորս ամսագրերուն Ո-
գոտուսի թիւերը ստացած չենք:

Մեր ստացածին համեմատ՝ այսօր Ալո-
սահայց երկու օրագիր ունին և մէկ շա-
րաթական լրագիր, որ յԱստրախան կը
հրատարակուի. երեք շաբաթաթերթ, ու
վեց ամսաթերթ (ի մէջ առնելով նաև «Ա-
րարատ»ը), այս է ամրող Ռուսահայ Մա-
մուլին արտադրութիւնը:

Հ. Մ. Պատուցեան

↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔↔

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱԿ

Հ. Բ. Սարգիսիան. — Հնագրական կարես ա-
ռեղծուած մը և անոր լուծան նախափորձ. 433
Պոտորիսամ Հ. Մ. — Հայ Մասուլ տասնե-
հինգ տարուան մէջ (Ալբէնիա, Հանդէս Ամօրեա,
Հնակ, Հայք, Մասիս, Աւատաբեր, Փունչ, Հայ-
րէնիք) 442

Գ. Բ. ԿԱԿԱՆ

Մէկերիթ Մորիս. — Մահուան առջն (բնաւ.
թրդ. Ա. Փանոսեան) 449
Գօտրէլու Ը. — Ճաբած զանգակը (բնաւ. թրդ.
Ա. Փանոսեան) 449
Քէրէնան Վահան. — Փորձառութիւն (բնաւ.) 449
— Գայլին ճկումը (բնաւ.) 450
Վահէվահեամ Գ. Վայրի երգեր. Ա. 450
Անդրիկիս Հ. Ներսիս. — Անանք (Վ.էա) 450
Բէկ-Յովս. Ալտուածանուր. — Եղոր տեղ. 451
— Վ.էա Ե. Պ. Սիլիալովստյան 458
Հ. Ղեւող Ալիշամ. — Օրագիր առժամայն ազդ-
անց մատա և սրբ (1848) 489
Ուժեան Ա. — Ալաւական գործ 462
Պոտորիսամ Հ. Մ. — Թէ Տաղ Փարան ի՞նչ էլ պ-
պատմէ (Առանայ ի որբէներուն) 465
Զարքարան Ջոյր Մ. Արտազան Տարօնէն Գե-
րաբան. Ներսիս Ճանապարհ մահուան 466
Պոտորիսամ Հ. Մ. — Ասանցից որբիկը - Ա-
նօրի եմ, կը մրիմ 468

ԳԻՏԱԿԱՆ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

Տ. Հ. Ն. Շահնաւոր ճանապարհորդութիւն կնէ-
դանեաց մէջ (Շար. թիւ 9) 470
— Սամէխնուզ (Գիգր) 478

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Պոտորիսամ Հ. Մ. — Ռուսահայ գրականութիւ-
նը Ա. Գրքեր, Բ. թերթեր 477

Գ. Բ. Դ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ե.

Թ. Ա. Տ. Բ. Բ. Գ. Ա. Կ. Ա. Ե.

Շարունակելի հրատարակութիւն կը ծեւանայ շարք
մը թուակագեալ ութածալ հատորիներ, որոնց կը
մայացն յասկապէ՛ ազայց ընթերցման և զպոցնե-
րութեանց. — Հետեւեալ ցանկին մէջ Ա. և Կ. տա-
սերը կը ցուցնէն մէջ ի հրատարակութիւն ամրէ մէջ ուրան
Ալլ և ուրան ինք ի հուսուն զիր ունին:

Խորապես հրատարակութիւն կին է ֆ. 0,50; — Գնե-
ւու համար զիմել այս հասցէն. Imprimerie Armé-
nieenne. — Venise (Ա. Տ. Lazare).

Մինչև օրս հրատարակութիւն են հետեւեալները.

1. — Ս. Դոմինիկի կազուոյ զիրիմ. տրամ. գրեց Ճ.
Քուայաննի. թարգմանց. Հ. Ա. Վ. Տիրոյեան.
1905, էջ 22. — Ա. 6, կ. 1.
2. — Խաղամալ. տրամ. գրեց Հ. Ա. Վ. Տիրոյեան.
1906, երեսորդ առ. էջ 84. — Ա. 20.
3. — Ա. — Երկու ծայրայիկմիր. գրեց Հ. Ա. Վ.
Տիրոյեան. 1907, էջ 1-25. — Ա. 5.
- Բ. — Երեք քաջիրը. գրեց Հ. Ա. Վ. Տիր-
ոյեան. 1906, էջ 26-52. — Ա. 7.
- Գ. — Գողոցուած սազր. թարգմ. Հ. Ա. Վ.
Տիրոյեան. 1916, էջ 53-80. — Ա. 8.
4. — Ա. — Երկու հրացանակիմիր. զաւու. 1907,
էջ 1-35. — Ա. 7.
- Բ. — Տազեապալից զիշեր մը. զաւու. թարգմ.
Հ. Ա. Վ. Գոնսաբեան. 1907, էջ 86-64. — Ա. 8.
5. — Սիմոն Տանիսապեալ. տրամ. գրեցին Տիրոյ-
ոյեան և Տինըրի. պատասխան թարգմանց Հ.
Ա. Վ. Տիրոյեան. 1908, էջ 130. — Ա. 12,
կ. 4.
6. — Ա. — Որդիկամաթ սէր. տրամ. գրեց Ճ. Ճնո-
յեա. թարգմ. Հ. Ա. Վ. Տիրոյեան. 1908,
էջ 1-58. — Ա. 8.
- Բ. — Անզմանկ ալտամամակիմիր. զաւու.
գրեց Ա. Գողոցու. թարգմ. Հ. Ա. Վ. թարգմանէկնեան. 1908, էջ 59-95. — Ա. 7.
7. — Ա. — Զուիսերիի որբը. տրամ. թարգմ. Հ. Ա. Վ.
Գոնսաբեան. 1908, էջ 1-95. — Ա. 10.
- Բ. — Արարագոյ Յամակը. զաւու. գրեց Հ.
Ա. Վ. Տիրոյեան. 1908, էջ 96-114. —
Ա. 2, կ. 1.
8. — Ա. — Մարտիրի Գապայիմ Բամինոր. տրամ.
գրեցին Կրտման և Գրանց. իւլ. վերած-
մունքն թարգմ. Հ. Աւենդ Տայեան. 1909,
էջ 1-94. — Ա. 12.
- Բ. — Ամերիտ զիշեր մը. զաւու. թարգմ.
Հ. Ա. Վ. Գոնսաբեան. 1909, էջ 95-
114. — Ա. 2.
9. — Ա. — Սամզուիս Բամիմեատ. տրամ. գրեց
Հ. Ա. Վ. Տիրոյեան. 1909, էջ 1-70. —
Ա. 9.
- Բ. — Նիկոտրիմ արգարասէր. տրամ. գրեց
Հ. Ա. Վ. Տիրոյեան. 1909, էջ 71-185.
— Ա. 18.
10. — Ա. — Պոտոտիի Բամարկեալմիրը. տրամ.
թարգմ. Հ. Ա. Վ. Գոնսաբեան. 1909,
էջ 1-40. — Ա. 12.
- Բ. — Ամանակ որբիմ. տրամ. գրեց Ա. Աւ-
րափիւս. թարգմ. իւլ. էպուէ 1909, էջ
41-68. — Ա. 9.
- Գ. — Երկու Բամկարկիատը. զաւու. թարգմ.
իւլ. էպուէ. 1909, էջ 69-92. — Ա. 10.